



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## ՈՐՈՇՈՒՄ

27 մայիսի 2020 թվականի թիվ 50-Ա

ք. Երևան

**«ԱՐՏԳԱՐ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՏՐՎԱԾ ՀԵՌՈՒՍՏԱՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ  
ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ԹԻՎ 48 ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՊԱՀԱՆՁՈՎ  
ԴԱՏԱՐԱՆ ԴԻՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով, 44-րդ հոդվածով, 58-րդ հոդվածի 2-րդ մասով, 61-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 2-րդ, 3-րդ մասերով և «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով, և հիմք ընդունելով «ԱՐՏԳԱՐ» ՍՊ ընկերության կողմից «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված պահանջի խախտումը, այն է՝ առանց որևէ հիմնավոր պատճառի 24 ժամ շարունակ չի ապահովել հեռուստահաղորդումների հեռարձակումը և ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության 2020 թվականի մայիսի 22-ի թիվ 04/11.1/2828-2020 գրությունը՝ «ԱՐՏԳԱՐ» ՍՊ ընկերության կողմից 2019 թվականի դեկտեմբերի 24-ից հեռարձակումներ չիրականացնելու վերաբերյալ, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը ***որոշում է***.

1. Դիմել ՀՀ վարչական դատարան՝ «ԱՐՏԳԱՐ» ՍՊ ընկերությանը տրված հեռուստահաղորդումների հեռարձակման թիվ 48 (տրված՝ 18.04.2002թ-ին, սփռման տարածքը՝ ք. Վանաձոր) լիցենզիայի գործողության դադարեցման պահանջով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «ԱՐՏԳԱՐ» ՍՊ ընկերությանը պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՑԻ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

**Տ. ՀԱԿՈԲՅԱՆ**

27 մայիսի 2020թ.  
ք. Երևան